

Պետք է ենթադրել, որ աստիճանական վերա-
լցման և կոնյակի սլոնակների կերտիչյալ մե-
թոդները հետազոտում կարող են հիմնվել պահա-
մանն երամ իրագործվող հնացման վրա:

Գ Ր Ո Վ Ա Ն Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Л. М. Джанполадян и Е. Л. Манукян, Химические
изменения коньячной дубовой пленки при нагре-
вании. «Коньячное производство». Труды инсти-
тута «Магарач», т. V, 1957.

2. Л. М. Джанполадян, М. С. Седракин, Ц. Л. Петро-
сян, Известия АН Армянской ССР. Биол. и с. х.
науки, т. V, № 12, 1952.

3. Г. Г. Агабалинц, Выдержка коньячных спиртов в
эмалированных резервуарах с дубовой пленкой.
Всесоюзная научно-техническая конференция по
коньячному производству (Тезисы докладов), 1957.

4. В. И. Нилов, И. М. Скурихин, Всесоюзная научно-
техническая конференция по коньячному произ-
водству (Тезисы докладов), 1957.

ԵՐԿԳՈՒՅՆ ԼԱՔԻ ԱՐՏԱԴՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՇՈՀՈՒՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԿԱՇՎԻ ԳՈՐԾԱՐԱՆՈՒՄ

Մ. ԼԻՎՇԻՑ

Երևանի կաշվի գործարանի տեխսմենի վարիչ

Երևանի կաշվի գործարանում, կոպիտ բնական
նկարի և հումքի թերությունների հետևանքով, տե-
սակավորման ժամանակ կաշվեղենի մի մասը
փոխադրվում է ավելի ցածր տեսակների: Լաքա-
պատած կաշվեղենի տեսակների թիվը բարձրաց-
նելու, ինչպես նաև շքեղ կոշիկեղեն կարելու վրա
ծախսվող կաշվե ապրանքների ասորտիմենտը
ընդարձակելու համար լաքապատման ցեխի վար-
պետ Ս. Ավոյանի առաջարկությամբ երկգույն լա-
քի թողարկումը յուրացնելու որոշ աշխատանք է
կատարվել:

Այդ խնդրի լուծումն իրագործվում է երկու
եղանակով.

1-ին եղանակ: Լաքապատած պատրաստի կաշ-
վեղենը տեսակավորելուց հետո առանձնացվում
են ավելի ցածր տեսակների կաշիները և մամլիչի
միջոցով մամլվում են $50-60^{\circ}\text{C}$ -ում, հատուկ
նկար ունեցող սալաքարով, որի վրա փոսիկներն
ու ուռուցքները հաջորդում են իրար: Մառլայի
տամպոնի օգնությամբ մամլված կաշվի մակերե-
վույթին քսվում է բրոնզի կամ սպիտակ գույնի
նիտրոնեերկ (կաշվի երկգույն մշակման մեթոդ):

Այս դեպքում ուռուցիկ մասերը ներկվում են, իսկ
փոսիկները մնում են չամրացված, դա էլ կազմում
է երկգույն նկարը:

2-րդ եղանակը գործարանը յուրացրել է 1957
թվականի դեկտեմբերին և հիմնված է նկարը
կաշվի վրա տեղադրել արդյունաբերության մեջ
կիրառվող սրաֆարետի օգնությամբ փոխադրելու
սկզբունքի վրա: Տրաֆարետը պատրաստված է
մետաքսե մադից, 1000×700 մմ չափով, որը
համապատասխանում է կաշվի չափին: Որպեսզի
նկարը փոխադրվի կաշվի վրա, որը տեղավորվում
է հարթ ապակու մակերևույթի վրա, կիրառվում
է կաշեգործական նիտրոէմալ՝ 13—15% չոր մնա-
ցորդով: Մետաքսե մադը դրվում է կաշվի վրա,
իսկ մադի վրա լցվում է ներկը, որը ռետինե քե-
րակի միջոցով տարածվում է ամբողջ մակերեսի
վրա:

Մատնանշած եղանակով դրվագված կաշին
ձեռք է բերում շքեղ տեսք, ունենում է լավ փայլ
և դրեթե լիովին քողարկում կաշվի երեսի թե-
րությունները: